

# ԵՐԵՔ ՀԱՅԵՐ ՎԻՐԱԻՈՐՈՒԱԾ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ

## ԳՈՐԾԱԴՈՒԼ ԵՒ ՑՈՅՑԵՐ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

### 19 ՀԱՅԵՐ ԵՒ 49 ԱԶԵՐԻՆԵՐ ԱՌԵՒԱՆԳՈՒԱԾ

Հ. Բ. Ը. Մ. ի Հայկական Տեղեկատու սպասարկութեան ստացանք հետեւեալ հեռագրալուրը, գոր կը հրատարակենք ամբողջութեամբ: Հեռագրալուրը գրկուած է սպասարկութեան Ուաշինկթընի կեդրոնին՝ Երեւանի յատուկ քղքակիցին կողմէ:—

Երեք հայեր վիրաւորուեցաւ Երեքշաբթի օր Ստեփանակերտի մէջ, երբ ներքին նախարարութեան ոստիկանական ուժեր կրակ բացին հայ ցուցարարներու վրայ, որոնք կը բողոքէին խորհրդային կառավարութեան մէջ պատուիրակութեան, այցելութեան դէմ:

Այս կապակցութեամբ յայտնենք թէ՛ ըստ միջազգային լրատու սպասարկութիւններու՝ պատուիրակութիւնը կը վիսաւորէր խորհրդային զերազոյն խորհուրդի ազգութիւններու բաժանմունքի նախագահ Ռաֆիք Նիշանով եւ մաս կը կազմէին Համայնալար կուսակցութեան կենտրոնի քարտուղար Անտրէյ Ճիրինքօ եւ Ատրպէյճանի Գ. Ժ. Պէ. ի պետ Կուսէյնով: Պատուիրակութիւնը Ստեփանակերտ կուգար տեղւոյն պատասխանատուներուն հետ հանդիպում ունենալու եւ կարգադրելու հայերու եւ ազերիներու միջեւ ծագած վէճը:

Շարունակելով, Հայկական Տեղեկատու Սպասարկութիւնը կ'աւելցնէ թէ իր թղթակիցը Երեւանէն հեռախօսով կապի մէջ մտած է դրապէտ եւ երեսփոխան Չորի Բալայեանի հետ, որ ըսած է թէ «Ղարաբաղի մէջ կացութիւնը շատ ձգտեալ է եւ վտանգաւոր: Ազերիներ կը շարունակեն չըջափակումը, իսկ հայեր դրդուած են չըջանի մէջ տեղի ունեցող վերջին իրադարձութիւններէն:

Բալայեան աւելցուցած է թէ խորհրդային կառավարութեանէն եւ զերազոյն խորհուրդէն պատուիրակութիւն մը եկաւ Ստեփանակերտ Երեքշաբթի օր, խօսակցութիւններ ունենալու համար տեղւոյն պատասխանատուներուն հետ, բայց հայեր ցոյց մը կատարելով օդակայանին մէջ ճամբան փակեցին եւ թոյլ չտուին որ պատուիրակութիւնը Ստեփանակերտ մտնէ: Պատուիրակութիւնը, որ նախապէս այցելած էր Նախիջեւան եւ Պաքու եւ խօսակցութիւններ ունեցած տեղւոյն ազերի պատասխանատուներուն հետ, ժամ մը մնալէ յետոյ օդակայանին մէջ՝ մեկնեցաւ:

Օդակայանին մէջ ներքին նախարարութեան ոստիկանական ուժերը կրակ բացին ցուցարարներու վրայ եւ վիրաւորեցին երեք հայեր, որոնցմէ մէկուն վիճակը շատ ծանր է եւ Երեւան պիտի փոխադրուի դարմանուելու համար:

Չորի Բալայեան թղթակիցին ըսած է թէ ինք (Չորեքշաբթի օր) Ստեփանակերտ կը մեկնի, կացութեան աւելի մօտէն ծանօթանալու համար:

Ան շեշտած է թէ օդակայանի միջադէպը պատահեցաւ երկու օր յետոյ երկու կամուրջներու ուժանակով քանդումէն յետոյ: Այս երկու կամուրջները շատ կենսական են Լեռնային Ղարաբաղի պարենաւորումին համար: Խորհրդային իշխանութիւնները ցարդ չյայտնարեցին ոճրափորձին հեղինակները, բայց ամէն կասկածէ վեր է որ ան գործն է ազերի ազգայնականներու կամ «թուրքերու», ինչպէս կ'անուանեն հայեր մահմետական ազերիները:

Կամուրջներու խափանումին անդրադարձաւ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը, ըսելով որ այդ ահարեկչութիւնը արդէլք հանդիսացաւ Լեռնային Ղարաբաղի սննդամթերքով եւ այլ անհրաժեշտ պիտոյքներով պարենաւորումին:

### ԳՈՐԾԱԴՈՒԼ ԵՒ ԱՌԵՒԱՆԳՈՒՄՆԵՐ

Մոսկուայէն, օտար լրատու սպասարկութիւններ կը հաղորդեն թէ պատկերասփիւռը հեռաւիճակ է Ստեփանակերտի օդակայանի մէջ խորհրդային պատուիրակութեան ժամանումը, որ կը լսուէին կրակոցի ձայներ՝ հեռուէն: «Սովետաքայա Ռոսիա» թերթը իր Չորեքշաբթիի համարով կը հաղորդէ թէ Ստեփանակերտի մէջ ընդհանուր գործադուլ հռչակուեցաւ: Հայեր խորհրդային ոստիկանութենէն տեղակալ մը պատանդ բռնած էին, զոր փոխանակեցին ոստիկանութեան կողմէ ձերբակալուած հայ սակտասխանատուի մը հետ:

Միջազգային լրատու սպասարկութիւններ կ'աւելցնեն թէ հայերու եւ ազերի թուրքերու միջեւ միջադէպերը կը բազմապատկուին օրէ օր: Ազերիները առեւանդած են 19 հայեր, որոնց մէջ Շահումեանի չըջանի Համայնալար կուսակցութեան ընդհանուր քարտուղարը: Իրբեւ հակադարձութիւն, հայեր առեւանդած են 43 ազերիներ նոյն չըջանէն եւ առաջարկած բանակցութիւններ, առեւանդուածներու փոխանակումին համար:

Հայաստանի զերազոյն խորհուրդի անդամ Լեւոն Տէր Պետրոսեան օտար թղթակիցի մը հեռախօսով ըսած է թէ Շահումեանի եւ Գետաչէն գիւղի վրայ յարձակում մը կը սպասուի, ազերիներու կողմէ՝ Չորեքշաբթիէն Հինգշաբթի լուսցող գիշերուան ընթացքին: Գերազոյն խորհուրդը հրահանգած է, կ'աւելցնէ Տէր Պետրոսեան, որ օգնական ուժեր դրկուին նոյն վայրերը, չըջանի բնակիչները պաշտպանելու համար: Մոսկուայի ռատիօն իր լրատուութեան մէջ խօսած է առեւանդումներու շուրջ, բայց բաւականացած է ըսելով թէ 40 ազերիներ առեւանդուած են հայերու կողմէ: Ռատիոկայանը աւելցուցած է թէ Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուի մէջ բողոքի բազմաթիւ հաւաքներ տեղի ունեցած են, «բողոքելու համար հայերու կողմէ կատարուած առեւանդումներու դէմ»: